ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

01 հոկտեմբեր 2025թ.

N 289-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28-Ի ԹԻՎ 116-Ա ՀՐԱՄԱՆԸ ՄԱՍՆԱԿԻ՝ ԴՐԱ ՀԱՎԵԼՎԱԾԻ «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ» ՑՈՒՑԱԿԻ 43 ՀԱՄԱՐԻ ՆԵՐՔՈ ՆՇՎԱԾ ԱՆՁԻ ՄԱՍՈՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՆՐԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ՝ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱԳՐՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով ՀՀ Արագածոտնի մարզպետի 09.07.2025թ. թիվ 01/8/04677-2025 և 14.08.2025թ. թիվ 01/8/05426-2025 գրություններով ներկայացված հանգամանքները, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետով, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2025 թվականի մարտի 28-ի «Գնումների համակարգողների որակավորումը դադարեցնելու մասին» թիվ 116-Ա հրամանը մասնակի՝ դրա հավելվածի «Գնումների համակարգողների որակավորումը դադարեցված անձանց» ցուցակի 43 համարի ներքո նշված անձի (Արմեն Խաչատրյան, ՀԾՀ՝ 3004740230) մասով գնումների համակարգողի որակավորումը դադարեցնելը ճանաչել անվավեր, նրան ներառել գնումների համակարգողների՝ 2025 թվականի շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների և տեղեկագրում հրապարակվող գնումների համակարգողի որակավորում ունեցող անձանց ցուցակներում:

2. Սահմանված կարգով ապահովել սույն հրամանի հրապարակումը տեղեկագրում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հասցեատիրոջն իրազեկելու օրվան հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

Recoverable Signature

X

ՎԱՀԵ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN VAHE 2903800432